

Մարզուանի Հայերուն վերագրուած յարձակումը, և թէ ընդհակառակը, այս վերջինները օգնութիւն կը խընդբէին: Միեւնոյն օրը կուսակալութեան կը հեռագրէ նաև որ թաճիրլիի աշիրէթը — որ Օսմանիէի մէջ աւերումներու սկսած էր — յարձակած էր Չորք-Մարզուանի վրայ: Օսմանիէն, Համիտիէն, շրջակայ ուրիշ գիւղերէ ստացուած հեռագիրներ կը ծանուցանէին թէ ամէն տեղ՝ Ատանայէն խմբովին հասնող բնիկ կամ եկեւոր Իսլամներն էին որ սճիրներ կը գործէին և հանրային կարգը կը խանգարէին:

Հախառակ ասոր, միևնոյն Ասաֆ պէյը, Ապրիլ 3ին կը հետագրէ Ներսիս Գործոց Նախարարութեան թե՛ Հասան-Պէյլի և Չէքուռնի փեսայիները հաւաքուած են սակնազը քարոսակոյ ընկրո հաւար և շատ հաւաքարար պիտի գան միևնոյն Ասանա: Ապրիլ 4ին, հեռագրաւ հրահանգ կ'ուզէ Նախարարութենէն և կուսակալութենէն՝ Փափագ-Քալէի 400 բանտարկեալները ազատ արձակելու, անոնցմով կազմելու համար վաշտ մը և զանոնք զինել հրացաններով և ռազմանիւթերով՝ զորս կը պահանջէ Իսկէնաէրունէն: Իր ծրագիրը կը գործադրէ. կ'արձակէ բանտարկեալները, կը զինէ և զանոնք կը մղէ Հայերուն դէմ:

Ինչպէս բացատրել շարժելու այս եղանակը և ինչո՞վ որակել զայն:

Ասաֆ պէյ կ'ուզէ հաւատացնել որ Համիտիէի կոտորածը սկսած է՝ այդ քաղաքին քահանային կողմէ Արսլան պէյի վրայ պարպուած ատրճանակի հարուածէ մը: Սակայն ապացուցուած է որ յիշեալ քահանան հողի մը գնման համար վճարած էր 40 ոսկի և կառավարատուն գացած էր՝ իր գնած հողին պաշտօնական մուրհակները ստանալու համար: Ուստի, ողջմտութեան հակառակ է ընդունիլ որ մի միայնակ կառավարատուն